Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Երևանի Հ. Հայրապետյանի անվան թիվ 78 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (11 ժամ) և ռուսաց լեզվի (18 ժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և հարցազրույց (մանկավարժական մասնագիտական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին ներկայացնում է.

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1), մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի
2. բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 4)
6. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
7. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
8. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 15 ^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթն անցկացվելու է Երևանի Հ. Հայրապետյանի անվան թիվ 78 հիմնական դպրոցում՝ 2021թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 13^{00}-ին: Հասցեն՝ Բաղրամյան 59 ա :

Տեղեկությունների համար զանգահարել (010) 22-58-36:

Դպրոցի տնօրենի ժ/պ՝ Մ. Մարգարյան